



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԻՐԵՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱ ՇԱՐԱԹ 14 ՄԱՅԻՍ 1877

ԹԻԻ 1066

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ի տեսարանէն պատերազմին հասնալ տեղեկութիւնքն նպատակաւոր են միշտ օսմանն ան զօրաբանակաց, որք հարեւնասիրական եռանդուն քաջութեամբ մարտնչելով կը հալածեն զթշնամին թէ՛ Ասիոյ կողմը և թէ՛ Դանուբի վերայ, որ կայսերական նաւատորմին կը թնդակոծէ զպետեղերեայ քաղաքս, ինչպէս նաև Ս. Մարտին ակունքը եղած՝ թշնամւոյն ամրոցներն, Ստոյգ է թէ տակաւին որոշիչ մեծ ճակատամարտ մի տեղի չունեցաւ, բայց և այնպէս Սօքրատ—Գալէսի բերդին առնուիլն նշանակութեան արժանի է վասն օսմանն կայսերական զորաբանակին. քանզի այս յաղթութիւնն արդէն ապստամբական շարժում մի պատճառեց Կովկասի լեռնականաց մէջ, և շատ հաւանական է որ յիշեալ շարժումն արդեւ պիտի լինի Ռուսոյ զորաբանակաց յարձակմանը. Կըհաւաստեն թէ Ապաղի ցեղերն ևս ապստամբութեան գործակն պարտքեր են. նմանապէս յորմէ հետէ օսմանն նաւատորմին զօրք հանեց ի Սօքրատ Գալէսի, ինքնայօժար ընդհանուր ապստամբութիւն տեղի ունեցած է Կովկասի մէջ՝ Սև ծովէն Կասպի մինչև ի Կասպից ծովն. ուստի Բարձրագոյն Գեորգի օգուտ քաղել ուզելով այս կարևոր պէպէս, 10.000էն աւելի զօրք կը յուղարկէ Սև ծովուն Արեւելեան եզերքը հանդերձ 20000 կայանօք, բաւական թնդանօթներով և պատերազմական պաշարօք:

Ե. Պօլսոյ օսմանն լրագիրք բարձրա. Շէյխ—Իսլամ էֆենտիին երկու վճռագիրերը (թիվ 4) կը հրատարակեն. յորոց առաջինը կը յայտնէ թէ մասնակցութիւնն ներկայ պատերազմին (որ կը լինի յետոյ ընկրկելու համար զյարեւելեան թշնամւոյն) գլխաւոր և անհրաժեշտ պարտաւորութիւն է բոլոր օսմանց համար, և երկրորդ ֆէթվայով Ղազի (յաղթող) տիտղոս կը տրուի օգուտ. Ապաղի և Զամիս Սուլթանին՝ Սօքրատ—Գալէսի բերդին առնուիլն և Կասպից ծովին անհրաժեշտ պարտաւորութիւնն և Կասպից ծովին անհրաժեշտ պարտաւորութիւնն:

նին՝ Սօքրատ—Գալէսի բերդին առնուիլն և Կասպից ծովին անհրաժեշտ պարտաւորութիւնն:

Ի մօտ աւուրս յոյժ կարևոր վիճարանութիւնք եղին Մեծին—Բրիտանիոյ բարլամէնթին մէջ ի մասին պարագայից ներկայ պատերազմին. Հասարակաց Խորհրդարանին մէջ սրբ Սթէֆֆորտ Նորտքոթ որ եկամտից նախարար է, պատասխանելով Հէրթ ընկթըն մարքէզին, ըսաւ թէ Թուրքիոյ միմիայն յոյսն պարտի լինել իւր վարչական հաստատութեանց կատարեալ բարեկարգութեան վերայ, և յաւելցուց թէ ցորչափ որ Անգղիոյ օգուտներն և մասնաւորապէս Հնդկաստանի ճանապարհին վերաբերեալ օգուտներն անփաստ կը մնան, ամենեւին օրինաւոր պատճառ մի չկրնար լինել, որպէսզի Անգղիան մինակ մաքառի դատի մը համար՝ որ հաւասարապէս կը վերաբերի նաև միւս տէրութեանց օգտին. Սրբ Սթէֆֆորտ Նորտքոթ ըսաւ վերջապէս թէ Անգղիոյ կառավարութիւնն իւր հաւանութիւնն չտուաւ Ռուսիոյ ընթացքին և ոչ զայն գրգռելոյ պատճառ տուաւ. «Կառավարութիւնն» յաւելցուց եկամտից նախարարն, կողմէ ազատ մնալ առ ի գործել յօգուտ Անգղիոյ և այս օգուտն ուրիշ կերպիւ չկրնար ձեռք բերուիլ, բայց միայն աշխատելով հաստատուն պահել զխաղաղութիւնն և զբարօրութիւնն բոլոր աշխարհի. ուստի Անգղիան պիտի շարունակէ հետեւիլ այս քաղաքականութեան:

Միտար կէտսթընին հակա—օսմանն առաջարկութիւնքն մերժուեցան երեսփոխանական ժողովոյն մէջ 354 քուէից առաւելութեամբ ընդդէմ 223 քուէից:

Ռուսիոյ դեսպան ի Լոնտոն՝ Շուվալով կոմսին ի Պէրլին երթալն քաղաքական կարևոր նշանակութիւն մի ունի. քանզի կը հաւաստեն թէ յիշեալ դեսպանն Պէրլին մէջ Գերմանիոյ կայսեր հետ խորհրդակցելէ ետեւ ի Բեռլին պիտի երթայ. ուսկից ի Լոնտոն պիտի չվերադառնայ, կըսեն լրագիրք մանք:

Բաց յայտնէ ի պաշտօնական յայտարարութեանց կը տեսնուի թէ մտերմական յարաբերութիւնք հաստատեալ են ի մէջ Անգղիոյ և Աւստրոհունգարիոյ կառավարութեանց ի մասին Արեւելեան խնդրոյն. Եթէ այսպիսի քաղաքային համաձայնութիւն մի կայ ի մէջ յիշեալ երկուց տէրութեանց, ցրտութիւն ամենեւին պիտի չլինի ի մէջ Պէրլինի և վէնայի դաշնաց. Ընդհակառակն կը հաւաստեն թէ Գերմանիան հաստատապէս որոշած է թոյլ չտալ որ Բանսլավեան քաղաքականութիւնն փնտս հասցնէ Հապսուրկի կայսերական ազգատոհմին. Այս տեղեկութիւններէն՝ որոց ստուգութեան վերայ տարակոյս չկայ, կերեւի թէ երկոյ կայսերաց գաղտնի դաշնակցութիւնն վերջացեալ է:

Անգղիական լրագիրք կը հրատարակեն ներքին գործոց նախարար միտար Գրօսին ատենախօսութիւնն՝ զոր ըրաւ Հասարակաց Խորհրդարանին մէջ. Յիշեալ ատենախօսութեան արժան կը համարուի «հետեւեալ տողերն յառաջ բերել» զորս ուշադրութեան արժանի կը համարուի:

«Ի պատերազմին» որ սկսաւ ի սուղ ժամանակէ հետէ, Մեծն—Բրիտանիա ինքզինքն կատարեալապէս չէ զօք հրատարակեց, և իւր բոլոր ջանքերը պարտի աշխատել առ ի սահմանափակել և տկարացուցանել զպատերազմն. քանզի երբ անգամ մի պատերազմն սկսաւ, ոչ ոք կրնայ ասել թէ ո՛ր և երբ պիտի վերջանայ, մասնաւոր եւրոպիոյ այս մասին մէջ. Զեմք գիտեր թէ միւս տէրութիւնքն ինչ կը խորհին. բայց ես յայտնապէս կըսեմ թէ Ռուսիան ամենածանր պատասխանատուութիւն մի իւր վրայ առաւ՝ պատերազմին հրդեհը բորբոքելով, յորմէ փնտսեցան և պիտի փնտսին եւրոպիոյ օգուտքը, ինչպէս նաև Անգղիոյ և Արեւելեան երկրներուն օգուտներն:

Երկար ժամանակ չէ որ Ռուսիոյ կայսրն հանդիսապէս յայտնեց մեր դեսպանին թէ ամենեւին աշխարհակալութեանց բաղձանք չունէր և ոչ իսկ ամենափոքր փափաք, ամենափոքր դի-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի ՀԱՆԳԻՍՏ

Տեսուհ Գովհանու Զիվիճեան առաջապատի քահանայի Զմլուհիոյ ՍՓՈՓԱՆԻ

Ճակատ վսեմ, յօնք սիրագիծ, որպէս արդի ոսկեծղի, Ալիուք հրացայտ, անմահութեան բոլոր ի նոսա ծաւալի. Վարսից գիսակըք լուսասփիւռ տուեալ հողմոյն ի ծածան, Տարերք համայն և արարածք ոտից նորա պատկառ կան, Հանգունատիւ որպէս արեգն՝ ճաճանչ սփռեալ Աստուածեան, Եւ թեւք նորա արծաթապատք ի գոյն շողայ փլունիկեան. Ոմ սրանայ ի յղիմայիս, գայ յաշխարհիս ի սահման, Յերկնաբնակաց զարմէն թուի սա պաշտօնեայ Տերունեան. Առ ինչ գալուստդ, ո՛վ Զուարթուն, մահկանացուացս ի սահման, Արդեօք ընդ հուպ տէրունական սպասեալ տօնիցն Յարութեան Շնորհ հարկանել փութաս առ մեզ՝ կամ հրաման ինչ երկնային Առեալ բերես կարգալ ի յուսնն հաւատացեալ մեր ուխտին. Աւաղ ո՛չ այս ո՛չ այն երբէք, այլ գէմք նորա և ուղին Արդ առնեն մեզ թէ՛ զօմն ընդ հուպ գայ հրաւիրել ի յերկին. Մի դու ուրեմն զի՞ յապաղես, Հրեշտակդ ողբոց, եկ խղես Աւագերէց տէր Յովհաննու՝ զկապանս մարմնոյն անխնայ. Այն ինչ մեղմիկ հուպ մերձեցաւ առ Հայրն մեր սրբութեան, Քաղցր ի ժպիտ ձայն արձակեաց, ձայն իմն վեհ գերբնական. Արարած, Որ փակեաց ըզհիւրդ ի կաւեղէն յայդ ի տուն, Անդարձ վճռէ թողուլ զվայրս գառնալ առ ինքն, սէր անհուն. Զերթ ոք ի քուն կայ քաղցրանին յանկարծ զարթնու ահագին, Ի ձայն վեհին նա այլ յայլմէ եկաց պատկառ հրամանին. Այն ինչ ետես զդէմն Զուարթնոյն, կամ ժխտել դառնագին Զօրհասական մահուն բաժակ, այլ Սէր և սիրտ յաղթեցին:

Խնդրեաց ըզփոխն առնուլ երկոց նկանակացն Հացի, Հաւատ, Յոյս, Սէր պըսակեցին զիղձս Օծելոյն փարելի. Վտակը յակնցն արձակեալ, հապա եկած եդ ծնրիկ, Լուիկ մնջիկ և անբարբառ պարէր մտօքն անկեղծիկ:

«Տէր, անկանիմ առաջի քո փառս տամ քեզ հաւատով, «Զօրք զօրաւիգն ինձ աղերսել ժախիմ՝ այս լի յուսով. «Եւ զհաւաքանս և զարտասուս անտես երբէք ոչ առնես, «Մեռաց անդորր՝ յիս կարկառեալ զԱյլ քո անմահ կենարար՝ «Գալ առ քեզ Հայր տիեզերաց, այս իմ էր իղձ սրբավառ. «Թողում զորդիսն իմ կաթողին զորովք այնքան փառէի, «Սուրբ սփոփանք ի քէն բղխին, շնորհեալ նոցա լիուրի»:

Նուաղեաց ձայնն, դալուկն պատի և տիւ նորա մեռանի. Զի վերադաւ Հիւրն անծանօթ՝ հիւր երկնայնոցն տանի. Մարմինն անշունչ և անբարբառ դի ի բազուկս որդեկաց, Թողու ի ցաւս, վեհագունին այլ Յոյսն անդէն առնէ այց:

Անխառն սրտատուր կոծէ զսիրտ մեր վշտալից, Թողուլ զայսդոյն, Հայր, Քահանայ, և կարևոր աղագալից. Որ զսիրոյդ փրկութեամբ պերճ արգասիս գրաւական Թողեալ Հայրիկ, տաս հրաժեշտ յափանցս մեր տարաժամ. Ըզգօն վարուց դու պարզեցեր զողի յորդիսդ հայրախնամ, Հովիւ ընտիր և անբասիր ի պաշտամունսդ սրբազան. Գեղանիս ճգնաց քոյին Ստեփաննոսին այս տաճար, Որդիդ հոգւոյ և ժողովուրդքս եղաք տեսողք ընդ երկար. Քսան և ութ ամբ ի պաշտամանդ անձին աւաղ սրաթուիլ՝ Մշակք ընտիր յայդի փրկին, ո՛հ վերացար առ փրկիլ:

Սիրտք վշտակիր, կացէք անդորր. երկինք առին զցանկալին, Անմահութիւն զգեցաւ Հայր մեր, սփոփեցուք ընդ նմին:

ԿԱՐԱՊԵՏ Գ. ԶԻՎԻՃԵԱՆ

տառորութիւնն ունէր Կ. Պօլսոյ տիրելու, յաւել-
ցնելով թէ այս մայրաքաղաքին տիրապետելն՝
գլխաւորութիւնն էր պիտի լինէր վասն Ռուսիոյ :
«Եթէ, ըսաւ նաև Չարն, պարտաւորեալ լինիմ
գրաւել զմի մասն Պոլսոյ տիրելոյ, այս գրաւումն
առժամանակեայ պիտի լինի» :

«Եթէ Ռուսիոյ կայսրն հաստատուն մնայ իւր
խօսքին վերայ՝ զոր հանդիսաւոր կերպիւ տուաւ,
բրիտանական օգուտքն ամենեւին վտանգ մի
պիտի չկրեն : Բայց դժուարին է կասեցուցանել
յաղթական զօրաբանակ մի, և անգամ մի ոտքի
ելած ազգ մի՝ դիւրութեամբ չհանդարտիր : Ի
վերայ այսր ամենայնի, վեհափառ Թաղութեան
կառավարութիւնն կըհաւատայ անկեղծ մտօք
թէ Ռուսիան պիտի չուզէ դաշիւ այն օգտից
որք իրօք, պատերազմին նպատակէն դուրս
են. վասնզի եթէ դաշիւ ուզէ, Անգլիան և Եւ-
րոպան պիտի չկրնան անտարբեր մնալ :

Գերմանիոյ, Աւստրոհունգարիոյ և Իտալիոյ
դեսպանքն յանցելով շաքարով հասին ի Կ.
Պօլս. ուր սիրալիր յարգանքով ընդունուեցան
ի Բարձրագոյն Դրանէ : Գերմանիոյ նախորդ
դեսպան մօսիւ Վերթերին յաջորդեց Ռէյս իշ-
խանն, զոր ընդունելու համար՝ արտաքին գոր-
ծոց պաշտօնատան ընդհանուր խորհրդոյ քար-
տուղար Համմաճեան Սարգիս Էֆենտին ի
Տարտանել յուղարկեցաւ ի կողմանէ կայսերա-
կան կառավարութեան :

Մեծ տէրութեանց դեսպանաց ի Կ. Պօլս
վերադարձն անշուշտ բարեկամական նոր ցոյց
մի և բարոյական նպաստ մի կըհամարուի, զոր
Եւրոպան կամեցաւ մատուցանել Բ. Դրան :

Կայսերական հրովարտակաւ, մտ. Ստաուլլաճ
Պէյն Պէյրին օսմանեան դեսպան կարգեցաւ,
Գայսէրի Աճմէտ փաշան որ Եւրակուտի անդամ
է, Դանուբի գաւառին կուսակալ անուանեցաւ
փոխանակ Ստաուլլաճ փաշային, և Իսլամհիմ փա-
շան որ նմանապէս Եւրակուտի անդամ է, Տրա-
պիզոնի կուսակալ կարգեցաւ :

Հեռագիրն կըմանուցանէ թէ օսմանեան
զօրքն յաղթական նոր յաջողութիւն մի ունե-
ցան ի Սօդում—Գալէ, որով 300 Գազաք զին-
ուորք թրէ անցան ի Չամիւրա, և բաւական
գերիներ բռնուեցան, զորս ի նաւ դրուեցան
վասն Կ. Պօլսոյ : Բաղմաթիւ Չէրքէզներ ճամբայ
ելան կովկասու ապստամբութիւնն ամրացնելոյ :

Կ. Պօլսէն կըդրեն թէ վիճակաւ զինուորա-
գրութեան նոր կանոնադրութիւն մի հաստա-
տ

ուեր է վասն Մահմետականաց, Բրիտանիոյ և
Հրէից ի յիշեալ մայրաքաղաքն բնակելոց : Ա-
նոնք որ չեն ուզեր ծառայել զօրաբանակին
մէջ, պիտի պարտաւորին մարդ գլուխ 50 օս-
մանեան լիւա վճարել : Այս կանոնադրութիւնն
ի գործ պիտի դրուի նաև գաւառաց մէջ : Բ.
Դրան այս որոշման գործադրութեան համար
յանձնաժողով մի հաստատեցաւ, որոյ նիստերն
արդէն սկսան և ի մօտոյ պիտի գործադրուի
զինուորական վիճակարկութիւնն :

Ըստ օսմանեան պաշտօնական օրագրոյն,
հայկազուն վտ. Վահան Էֆենտին, որ Արգա-
րութեան պաշտօնատան խորհրդական է, նուե-
րեց զբոլոր ամսական թուշակ իւր (13,000 զու-
րուշ) ի պէտս կայսերութեան, անցեալ Ապրի-
լէն սկսեալ մինչև ցոյնը ներկայ պատերազմին :
Հայրենասիրական այս նուէրին համար օգու-
տութեան յատուկ իրատեսիլ կայսերական գո-
հունակութիւնն մատուցաւ և վսեմութեանը :

«Երէկ Ս. Պատրիարք Հայրը, կըսէ Փոլսն, ի
իրեն յատկացեալ ձեռք երկուք՝ Գալիս—Էֆեն-
տէ Էֆենտինի հետ զինուորական գործոց պաշ-
տօնատունը զրկեր է ի նուէր օսմ. զօրաց» :

Արքունի ճարտարապետ վտ. Պալեան Սար-
գիս—Պէյն ևս վնջ պատուական ձի նուիրեր է
ի պէտս կայսերական զօրաբանակին :

Հռոմէական Հայոց Պատրիարք՝ Հասունեան
դերապայծառն յանցելով տեսութեան գնաց
արտաքին գործոց տեսուչ Սալֆէթ փաշային :

Ի Կ. Պօլսոյ կըմանուցանեն թէ նոյն մայ-
րաքաղաքին պարսպապահ զօրաց թիւն 200,
000 պիտի հասնի :

«Կայսերական կառավարութիւնը որոշած է
Պօլսոյ շուրջ ամբողջութիւններ կառուցանել թէր-
քօսէն սկսեալ մինչև Չէքմէճէ և Սե Ծով : Ի
բաց առեալ 16 տարեկանէն վար եղողները, ծե-
րերն ու խեղանդամները, մայրաքաղաքին բո-
լոր բնակիչք պիտի մասնակցին այս շինութեանց՝
իւրաքանչիւրն վնջական օր, կամ անձամբ,
կամ իւրեանց կողմանէ մարդ ցուցնելով և կամ
փոխարէնը գրամ տալով : Այս ձեռնարկութիւ-
նը պիտի ըլլայ ոչ միայն ներկային, այլև ապա-
գային համար : Առաջիկայ շարժու կըսկսի : Ար-
դէն ոստիկանութեան կողմանէ բոլոր թաղե-
րուն ծանուցուցաւ ի պաշտօնէ :

«Մայրաքաղաքիս յոյն սեղանաւորներէն Պ.
Չարիֆի յանձն առած է 80 գործաւորաց օրա-
կան վարձը վճարել մինչև ցաւարտ շինութեան
ամբողջեանց» : Փոլսն

Մարտի 17 :

Արդ ինչպէս ամեն ժամանակ, նոյն և առա-
ւել ևս այժմ ներկայ պարագայից մէջ, ո՞ր գե-
րապատիւ Առաջնորդ եղբարք և ամենայն դասք
սրբակրօն եկեղեցականաց, ստեպ քարոզեցէք
և յեղյեղեցէք մեր հայրենաւանդ հնազանդու-
թեան և հաւատարմութեան պարտաւորութիւն-
ներն յունին ամենայն հաւատացեալ սիրելի
եղբարց մերոց, և բարեհաճեցէք յաճախ բա-
ցատրել Առաքելոյն հետեւեալ խօսքերը :

«Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն ըս-
տեղծուածոց իբրև Տեառն, եթէ թաղաւորի
իրև առաւել ումք, և եթէ դատաւորաց՝
իրև ի նմանէ առաքելոց» : Պատմ. Ա. Գլ. 13 :

Դարձեալ, «Ամենայն անձն որ ընդ իշխանու-
թեամբ է ի հնազանդութեան կայցէ, քանզի
ոչ ուստեք է իշխանութիւն եթէ ոչ յԱստուծոյ,
և որ ենն յԱստուծոյ կարգեալ են. այսուհետեւ
որ հակառակ կայ իշխանութեան՝ Աստուծոյ հը-
րամանին հակառակ կայ, և որք հակառակ կան
անձանց դատաստան ընդունին, զի իշխանքն
ոչ են յերկիւղ բարեաց գործոց՝ այլ չարեաց» :
Պատմ. Հոմ. Ժ. 1-2 :

Այլև ինչդեմ ի ձէնջ ամենեցուն աւագ ա-
ջօք ի նկատի առնուլ ժամանակիս պարագայ-
ներն, սերտ սիրով և անքակտելի միաբանու-
թեամբ գնալ ընդ միմեանս և ընդ ամենայն
հայրենակիցս անխորթ թէ ընդ կրօնակիցս և թէ
ընդ ոչ կրօնակիցս, ձեռք ձեռքի տալով և խոր-
շելով ամեն տեսակ վէճերէ, ամենայն համբե-
րութեամբ և երկայնմտութեամբ մնալ Աստու-
ծոյ ամենակարող սղարմութեանը, կարեկցաբար

—Ըստ ասութեան լրագրաց Կանց՝ Խալի-
պուրի դեսպանին, որ Ալէքսանդր կայսր
դուստրն է և կողակից Էտիմպուրի դեսպանին
այսինքն վիթորիա թագուհոյն որդւոյն, ի
մօտ աւուրս ի Բէդէրսպուրի իւր օգուտ հօղ-
քով պիտի երթայ :

Վէնայի Բրիտ. օրագիրն բողոքովն սուտի
կըհանէ այն լուրն թէ Չիլի կոմսին՝ այսինքն
Աւստրիոյ դեսպանին պատուէր տրուած է ծա-
նուցանել Բ. Դրան զլիտաւորութիւնն զոր
ունի Աւստրիոյ կառավարութիւնն գրաւելու
Պոսնիան և զՍերվիան : Այսպիսի պատուէր մի
ամենեւին չէ տրուած, կըսէ, Չիլի կոմսին, որ
միայն Աւստրիացի ազգայնոց օգուտները պահ-
պահելու համար ի Կ. Պօլս յուղարկեցաւ, և
միանգամայն հարկաւոր եղած միջոցներն ի գործ
պիտի դնէ առ ի տալ բաւուալ Դանուբի նա-
ւարկութեան արդելքը :

Փարիզէն հասեալ վերջին լուրքն կըմանու-
ցանեն թէ Պրոյի դեսպին նախագահութեամբ
նախարարաց նոր խորհուրդ մի կազմեցաւ, որոյ
վերայ հասարակապետական կուսակցութիւնն
վստահութիւն չունենալով, Եւրակուտին և Եւ-
րասիոսական ժողովոյն աշակողմեան ան-
դամքն հարկ համարեցան բողոքել ընդդէմ
քաղաքականութեան Մաք—Մահօն զօրապետին
որ ինչպէս յայտնի է, հասարակապետութեան
նախագահն է :

Օսմանայի մէջ զինուորական օրէնքն արդէն
հրատարակեցաւ և Լալասօֆ կոմսն զինուորա-
կան կառավարիչ կարգեցաւ : Պաշտօնական
ծանուցում մի կըհրաւիրէ զբնակիչս չտարա-
ծել անհանգստութիւն պատճառող լուրեր, այլ
ո՞վ որ կըվախայ, թո՞ղ մեկնի, կըսէ, քաղա-
քէն : Այս միջիթարական աղաւտութենէն օգուտ
քաղելով բազումք կըվախնին և կերթան ի
ներքին կողմերն. իսկ զինուորականք մեծ հա-
մուշտ ունին թէ պիտի յաղթեն :

ԱԶԳԱՅԻՆ

Ինչպէս մեր նախնիք աղ թուով խոստացեալ
եմք, ահա կըհրատարակեմք զյօդուածն ՄԱ-
ՍԻՍ լրագրոյն, որ մանրամասն և հետաքրքա-
կան տեղեկութիւններ կըպարունակէ ի վերայ
չնորձման յակնթաղարդ ոսկի խաչի ի թագա-
ւորէն Պրիմանիոյ առ մեծա. Խմբագիր—Տնօրէն
յիշեալ լրագրոյն :

Պրիմանիոյ վեհա. թագաւորն, որ Հայոց

և եղբայրաբար վարուելով ընդ ամենայն քա-
ղաքացիս մեր, ամեն ժամանակեւ աւելի զգու-
շութիւն և չղճահայեցութիւն, ըստ բանի ի
մաստնոյն. «Յիշեալ ո՞վ մարդ, երբ, ո՞ր և ընդ
ո՞ւմ իցես» :

Աղօթեցէք, աղօթեցէք ստեպ, որպէսզի Աս-
տուած հայր ազգաց և աղանց՝ մեր աշխարհին
խաղաղութիւն պարգեւէ, աղաւտելով զմեզ վե-
րահաս նեղութիւններէ, ապահովներէ և զմեզ
չարչարող և տագնապեցնող և մեր վրայ յար-
ձակող անկարեկիր թշնամիներէն :

Այլև կըպարտաւորեմք զիշեր ցերեկ կրկնել
մեր հանապազօրեայ աղօթքը առ Աստուած
վասն պահպանութեան անդին կենաց մեր օ-
գոտափառ թագաւորին Օսմանեանց՝ Սուլթան
Համիտ Բի, և վասն կարողութեան և իմաստուն
ղեկավարութեան ամենայն պաշտօնէից և նա-
խարարաց և անդդուելի զօրութեան և յաջո-
ղութեան Օսմանեան արեւգունդ բանակաց,
որպէսզի շնորհին Աստուծոյ և ընդ քաղցր հո-
վանեալ և հզօր պաշտպանութեամբ մեծի կայ-
սերս մերոյ՝ անվրդավ կատարեմք մեր կրօնա-
կան պարտաւորութիւնները՝ պաշտելով զՏէր
մեր Յիսուս Քրիստոս, պահելով զազատութիւնս
եկեղեցւոյ մերոյ, պահելով զԱստուածախօս
բարբառ մեր և զազատ խնամատարութիւնս
վարժարանաց մերոց և վանօրէից, զի և այս
պարտաւորութիւն պատուիրեալ է ի սրբոյ Ա-
ւետարանէն ըստ այնմ թէ :

«Եւ արդ աղաչեմ նախ քան զամենայն առ-
նել աղօթս, խնդրուածս, պաղատանս, գոհու-
թիւնս վասն ամենայն մարդկան՝ մանաւանդ

վրդեան խաւերու մէջ գործածուած լեզուի ձևերուն երբէք չհամապատասխանէր :

Աշխարհաբառը ներկայ անկանոնութեամբ և անիշխանութեամբ դէպ 'ի կանոնաւորութիւն պիտի դիմէ , և այս այն ատեն պիտի ըլլայ երբ հետզհետէ միօրինակութիւնն ինքնին հաստատուի , որ ատեն պիտի նկատենք զաշխարհաբառը իր կատարելութեան հասած , և չէ թէ այժմէն նորա գործունէութիւնը արդիւնելով կանոններ և օրէնքներ սահմանենք այն աշխարհաբառին որ թերեւ իւր ճկունութեամբ և առուգութեամբ մտքէ չանցած կանոններու ընդարձակ ասպարէզ մի պիտի բանայ ապագային մէջ : Առայժմ այս նորածին մանկան կաթը խնայել պէտք չէ , այն կաթը՝ այն մանգարար հիւթը՝ զոր դրաբառէ կառնու , որով ցարդ զարգացաւ և որու տակաւին մեծ կարօտութիւն ունի մինչև իւր կատարելութեան հասնիլը . և այս կատարելութիւնն ալ ժողովրդեան և ժամանակին միջոցաւ կըլլայ չէթէ ոմանց կամայական գրութիւններով , որ իւր ստուեր կըսահին և կըկորսուին՝ ժողովրդեան խօսեցած լեզուին ոճերու և ձևերու վրայ հետք իսկ չձգելով :

Այժմ իմացաք Գ. Չերազմեր դաղափարները , վիճաբանութեան շարժառիթ եղող պատճառները , նոյնպէս ձեր աշխարհաբառին աստ կարեւորութիւնն ստացած չըլլալը . անտարակոյս ձեր գրութեան այնքան մոլի չէք որ զայն բռնի մեզ ընդունել տալու յանդգնութիւնն ունենաք : Անշուշտ կըզգաք որ ձեր յօդուածին միւս մասը վրայ երկարօրէն և կէտ առ կէտ գրելն սանց վրայ երկարօրէն և կէտ առ կէտ գրելն աւելորդ է , վանդի արդէն անոնց ամբողջութիւնը կընկատենք՝ ձեր անձին նկատմամբ գովաստ մը կամ ներքող մը . և այս օրինակ տղասական մեծամտութեանց դէմ ուրիշ խօսելիք չունինք՝ թողով ձեր հաճոյից գովել ձեր գրութիւնը և հանճարը ուղածնուդ չափ . բայց որ և է ժամանակ վիճաբանած ատեննիդ ուշ գրէք անձնականի դէմ յարձակումներ , չընել ինչպէս ըրածէիք այս անգամ . և այս պատճառաւ փառք կուտանք Աստուծոյ , որ Միրզա ծնած ենք չէ թէ Չերազմ :

Գ. ՆՇԱՆ ՄԻՐԶԱ

ԴՕՕԻՖ ՊԱՍԽՈՒՄ

Աղիքաւոր Տիւմայի այս բարոյական ընտիր վեպին եօթներորդ հատորն է , բաղկացեալ յոթածալ 202 էրեսաց , զոր բարգմանեալ է 'ի գաղղիարէն բնագրէն 'ի հայերէն աղիքաբնիկ մարութ բարբառ՝ յարգոյ պարոն Կ. Եղազման գրագետն , եւ որ 'ի յոյս ընծայեցաւ 'ի Տեոքեան տպարանի 'ի Զմիւռնա :

Ամբողջ գործոյն բաժանորդագրութեան արժէքն 70 դուրու է . իսկ իւրաքանչիւր հատորոյն գինն կես արծաթ մեծիտիկ է :

ՀԱՄԱՌՕՏ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԽՈՒՄԻՒՆ
ՎԱՍՆ ԴՊՐՈՑԱՑ

Թօրինեալ 'ի յարգոյ Մ. Մամուրեանէ :

Այս պատուական դասագրքին երկրորդ մասն , որ կըպարունակէ զինքն պատմութիւն կարկեղոնացոց , Յունաց , Հռովմայեցոց եւ Հայոց , բաղկացեալ է 'ի 403 էրեսաց եւ 'ի յոյս ընծայեալ 'ի Զմիւռնա 'ի Տեոքեան տպարանի : Կըվաճառի 'ի Կ. Պօլիս՝ Ս. Ղ. եւ Եղազման գրատունը եւ 'ի բաղարքիս՝ Տեոքեան տպարանը : Գինն՝ 2 1/2 Թրանք է :

Զմիւռնիս , 6—18 Ապրիլ 1877

Մեծապատիւ տէր ,

Պատիւ ունիմք ձանուցանելու որ հանգուցեալ Հօրը եւ Յարութիւն եղբոր մահուանէ 'ի վեր տպարանիս անմիջապէս յաջորդքն ըլլալով , այսուհետեւ նոյնի վերաբերեալ ամեն գործառնութիւնք եւ հաղորդակցութիւնք պէտք է ուղղուին առմեզ :

Մնամք յարգանք , ամենախոնար ծառայք
ԵՂԱԶՄԱՆ ԳՐԱԳԵՏՆ

ՁԱՆՁԱՆՁ ԵՎ ԶՈՒՅՔ

Զմիւռնիս , 14 Մայիս :

Ի պարտն տեղական իշխանութեան հաստատեալ յանձնաժողովն , որ բաղկացեալ է 'ի մահմէտական , քրիստոնեայ և 'ի հրեայ անդամոց ընդ նախագահութեամբ Միւթիկէ Էֆէն :

Խիւն , հայրենասիրական եռանդուն ոգւով կայսատի դրամական օգնութիւններ ժողովել 'ի պէտս կայսերական զօրաբանակին : Մեր աղագային երեւելիներէն 10, 20 և 30 հազար շուրուշ ինքնայօժար կամօք նուիրողներ գտնուեցան : Կըլսեմք թէ յիշեալ յանձնաժողովն մինչև երէկ՝ 450,000 շուրուշի չափ ժողովեր է :

— Օտար տէրութեանց հպատակք , որք 'ի Զմիւռնա կըբնակին , երեքշաբթի օրն գումարութեամբ յանձնաժողով մի կազմեցին իրենց մէջ . որ մարդասիրական ոգւով պիտի աշխատի դրամական օգնութիւն ժողովել 'ի պէտս վիրաւորելոց օսմա . զօրաց և 'ի նպաստ ընտանեաց նոցա :

— Զմիւռնոյ վիճակին հովմէական ժողովըրդոց Առաջնորդ և Քահանայապետական նուիրակ գերա . Սրաքքաբէդէրա արքեպիսկոպոսն յանցելով շաբաթիկ մի մայր եկեղեցին լատինաց սրտաշարժ քարոզ մի տուաւ , հրաւիրելով զհոգեւոր հօտն իւր՝ ամեն կերպիւ նպաստամատոյց լինել արգար և իրաւացի մաքառման օսմանեան զօրաբանակին , որ ճշմարիտ քրիստոնէութեան մաքառումն կըհամարուի ըսաւ :

— Օսմանեան կայսերական գորվէթն՝ Պէրութ կոչուած , չորեքշաբթի օրն Կ. Պօլսէն գալով 9 հատ Գրուբի մեծ թնդ անօթներ բերաւ և հանց մեր նաւահանգստին մուտքը եղած բերդը , ուր պիտի դուրս 'ի պաշտպանութիւն քաղաքիս նաւահանգստին :

— Բարձրագոյն Դրան նախարարք՝ զչորրորդ մասն ամսական թոշակաց իւրեանց նուիրեցին արքունի գանձուն՝ մինչև ցվելով պատերազմին :

— Օսմանեան երեսփոխանական ժողովն քուէով որոշեց՝ նախկին Մեծ—Եպարդոս Մահմուտ փաշային դատաստանի ներքեւ գրուիլը :

— Դանուբի գաւառին նախորդ կուսակալ վսե . Սատըք փաշան վերադարձաւ 'ի Կ. Պօլիս :

— Երեքշաբթի օրն քաղաքիս Հրէայք՝ իրենց խանութները գոցելով սինակօկան գացին . ուր հանդիսաւոր աղօթք և բարեմաղթութիւններ ըրին առ Աստուած վասն յաղթութեան օսմանեան կայսերական զօրաց , և յետոյ երգեցիկ մանկանց ընկերութեամբ թափօրիւ դէպ 'ի տեղական իշխանութեան պալատը գացին , ուր հոգեւոր երգօք երկար կեանք և երջանկութիւն բարեմաղթեցին վասն օգոս . Սուլթանին :

— Կըլսեմք թէ ամենայն Հայոց վեհա . սրբադնագոյն կաթողիկոսն բարեհաճեալ է ականակուել խաչ մի յուղարկել մեր գերա . Առաջնորդ տէր Մելքիսեդեկ Մուրատեան ծայրագոյն վարդապետին 'ի նշան իւր Քահանայապետական գոհունակութեան : Սակայն մինչև ցայսօր յիշեալ խաչն և նորա վերաբերեալ կոնդակն տակաւին հասեալ չեն 'ի քաղաքս , գուցէ քաղաքական դժուար պարագայից պատճառաւ :

— Վէնայի Հայ վաճառականաց Հայկան Միութիւնն անուն ընկերութեան խնդրանաց համեմատ , կըսէ 1000 հանգէն , Ս. Պատրիարք Հայրն՝ Բարձրագոյն Դուռնէն առ վէնայի օսմանեան գործակալն նամակ մի զրկեց յառաջիկայ փոստայովոր տեղոյն Հայ ժողովրդեան համար մատուռ մի շինելու և միանգամայն հոգեւոր Հովուի մը 'ի պաշտօնէ ճանչցուելու հրամանն ստանայ 'ի տեղական կառավարութեանէն :

— Դարձեալ յիշեալ հանգէն՝ որ կըհրատարակուի 'ի Կ. Պօլիս , հետեւեալ կարեւոր տեղեկութիւնն կուտայ , որոյ 'ի վերայ ընդհանուր Ազգին և Հնդկաստանի Մուրատեան գերդաստանին անդամոց ուշադրութիւնն կ'հրաւիրեմք :

— Սուրբ Էջմիածնի պատուարժան Միաբանութեան և հանդիսի գործակալ գերա . տէր վահան վարդապետ Բաստամեանց , որ այժմ օդափոխութեան պատճառաւ 'ի փարիզ կ'ըլտնուի , յատուկ նամակաւ մը կիմացնէ Պատրիարք Ս. Հօր թէ՛ վեներեկի Միւթիարեան Միւթանութեան Հ. Աբրահամ վարդապետն 'ի փարիզ զրկուած է Մուրատեան վարժարանն ծախել , և մինչև 1,000,000 ֆրանք գին գտած է , և թէ այս օրերս այս ազգային սեփականութիւնն ինքնագլուխ ծախելու ձեռնարկած ըլլալուն , անմիջապէս անօրէնութիւն կըխնդրէ :

— Հեռագիրն կըձանուցանէ թէ Պուրէշի ազգային ժողովն քուէարկութեամբ որոշեց

զհրատարակութիւնն պատերազմի ընդդէմ թուրքոյ , և զանկախութիւնն Ռումանիոյ ժողովրդեան : Բայց վէնայի լրագիրք կըհաւատեն թէ մեծ տէրութիւնքն պիտի չընդունին և պիտի չձանաչեն զայս անկախութիւնն :

— Դարձեալ հեռագիրն կըձանուցանէ թէ Մեծին—Բրիտանիոյ կառավարութիւնն հրամաններ յուղարկեալ է յեգիպտոս , որպէսզի մննդեան և այլ հարկաւոր պիտոյից պաշարներ պատրաստուին Աղէքսանդրիոյ մէջ վասն 80,000 անդադիացի զօրաց :

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԾՈՎԱՓՈԼՆՑ

Société des quais de Smyrne.

Զմիւռնոյ ծովափանց շինութեանը ձեռնարկողք մեծարդոյ Տիւսօ Յրէր գաղղիացի ճարտարապետք , որք արդէն այս օրինակ զանազան մեծ ձեռնարկութեամբք , և իրենց ճարտարապետական գիտութեամբն արժանաւոր համաւստացած են ամենուրեք , նոր փայլ մի յաւելցուցին իրենց անուան վերայ՝ քաղաքիս ծովափանց գեղեցիկ շինութեամբք :

Զմիւռնոյ բնակիչքս անշուշտ երախտադիտութիւն կըպարտաւորեմք Տիւսօ Յրէր պարոնաց , որք յաջողեցան մեր քաղաքին գեղեցկութիւնը և պայծառութիւնը աւելցնելու եւ ըրպական քաղաքի մը կերպարան տալ նորա . որով նշանաւոր ծառայութիւն մի մատուցին ոչ միայն քաղաքացւոցս՝ այլև օսմանեան տէրութեանը . ծառայութիւն՝ զոր քաջայոյս եմք թէ կայսերական կառավարութիւնն պիտի դնահատէ ըստ արժանւոյն :

Ստոյգ է թէ 'ի սկզբան ոմանք 'ի գլխաւոր քաղաքացւոց մերոց՝ ոչ միայն չուղեցին քաջաւիրութիւն տալ ծովափանց ընկերութեանն , այլև դժբաղդարար կամեցան խոչնդոտն լինել և դժուարութիւններ յարուցանել նորա դէմ . բայց կարծեմք թէ այսօրուան օրս զղջացած պիտի լինին նոքա իրենց ձախորդ ընթացքին վրայ :

Գուցէ զրուցող գանուի մեզ թէ՛ պարոնայք Տիւսօ Յրէր այս ձեռնարկութեանը մէջ ուրիշ նպատակ չունենին և չունին , բայց միայն իրենց օգուտը . կըպատասխանեմք թէ մասնաւոր օգուտն՝ երբ ընկերակցեալ է ընդհանուրին օգտից հետ , յոյժ օրինաւոր է և հաճելի առաջի ամենեցուն :

Մեր այս զրուցածներուն տալացոյց կըհամարուի խուռն բազմութիւնն արանց և կանանց , որ ամեն երեկոյ պտըտելու կըլլէ 'ի գեղեցիկ ծովափունս , որոց մեծագոյն մասն արդէն սաւահատակաւ յարդարեալ է ըստ եւրոպական դրութեան : Յիշեալ բազմութիւնն՝ մանաւանդ այս տօթագին եղանակին մէջ՝ ծովուն զով օդն ծծելով և զուարճանալով՝ գովութեամբ և օրհնութեամբ կըյիշատակեն մեծարդոյ Տիւսօ Յրէր պարոնաց անուը :

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

Բամպակէն այս շաբթու 400 հակ վաճառեցաւ 'ի գին 330—350 շուրուշից՝ մեքենայով մաքրուածք , 345ի չէքքէք և 305—310 շուրուշի առ կենդինարն՝ Ատանայի բամպակ :

Աֆիօնն թէև հակամէտ է իջման , սակայն գնողք անպակաս լինելով՝ գլխաւորապէս վասն Ամերիկայի , գնոց անկումն կըյապաղի : Թանցելով շաբաթու ոչ սակաւ աֆիօն վաճառեցաւ 165 և 160 շուրուշով առ չէքին , յայսմ շաբաթու ևս գրեթէ 60 կողով վաճառեցաւ 155ի : Նոր հունձն առատ կերելի :

Փալամուտին գիներն հաստատուն են և այս շաբթու գրեթէ 4000 կենդինար վաճառեցաւ 155ի նախկինէլ կոչուած տեսակը հին հունձէն և 185ի առկենդինարն՝ Մէցանա ըստածք :

Ուխարի չլուացուած բուրդէն 250 կենդինար վաճառեցաւ 330—335 շուրուշով կենդինարք : Ճէհրին գինն 6 1/2—7 շուրուշ է օխան :

Խմբագիր—տէր լրագրոյ ,
Պ. — Լ. — Գ. — Պալէր—շաբթու :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՎԷԼԱՅՍՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ